ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ Է ՍՊԱՌՆՈՒՄ

Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի Ապրիլի 30ի նիստը շկայացաւ:

Մի քանի պատգամաւորներ, նշելով ստեղծուած ծանր կացութիւնը Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւ Գետաշէնում, տեղեկութիւններ պահանջեցին: Միաժամանակ առաջարկուեց Գերագոյն Խորհրդի նախագահին օժտել նախագահական լիազօրութիւններով:

Խօսք առնելով, վարչապետ Վազգէն Մանուկեանը տեղեկացրեց, որ Իջեւանի շրջանում ամբողջ գիշեր հրաձգութիւններ են եղել եւ աւերածութիւններ կան: -Մենք պիտի պատրաստ լինենք պատերազմի- եւ նման իրավիճակում անհրաժեշտ է խստագոյն կարգապահութիւն: Մեղրիի ղեկավարութիւնը ադրբեջանական կողմի հետ պայմանաւորուածութիւն է ձեռք բերել գնացքների անխափան երթեւեկութեան համար եւ դա մեզ համար ձեռնտու է: Չորրորդ բանակում զօրամասեր կան, որոնք ամբողջութեամբ բաղկացած են ադրբեջանցիներից: Եօթերորդ բանակում ոչ մի հայ չկայ, որովհետեւ նախորդ տարիներին զօրակոչ չի եղել: Բանակցութիւնների հարցին անդրադառնալով, վարչապետն ասաց, որ այս պահին նման բան հնարաւոր չէ իրականացնել, որովհետեւ դա կը լինի ուժի ճնշման տակ: Հաւանական բանակցութիւնների նախաձեռնութիւնը իր վրայ պէտք է վերցնի Մոսկուան: Եթէ այս վիճակը շարունակուի, պէտք է յայտարարել համաժողովրդական զօրահաւաք՝ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները:

Այնուհետեւ պատգամաւորները իրենց կարճ ելոյթներում անդրադարձան տիրող կացութեանը եւ առաջարկեցին գործնական քայլերի դիմել:

Մօտ կէս ժամ տեւած քննարկումը աւարտուեց նրանով, որ Գերագոյն Խորհուրդը նպատակայարմար գտաւ դադարեցնել իր աշխատանքները: